

Արարատի մարզպետ Արամայիս Գրիգորյանի շնորհավորական ուղերձը Սոցիալական աշխատողի օրվա կապակցությամբ

03.11.2017



Սոցիալական ոլորտի հարգելի աշխատողներ,

Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Սոցիալական աշխատողի օրվա կապակցությամբ: Դուք իրականացնում եք մի առաքելություն, որն անխախտ մաս է կազմում առողջ հասարակությանն ձևավորման դժվարին գործընթացի: Ձեր մեջ կրելով հարգանքի, կարեկցանքի և հոգատարության կարևորագույն որակները՝ դուք մշտապես կանգնած եք հասարակության խոցելի խմբերի կողքին, իսկապես կարիք ունեն ուշադրության ու խնամքի:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ տոնական օրվա կապակցությամբ և մաղթում անսպառ համբերություն, հավատ ու լավատեսություն ձեր դժվարին աշխատանքի ընթացքում: